

Հավելված N1  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
մարտի 31-ի N 338 - Ն որոշման

Կ Ա Ռ Ա Վ Ա Ր Մ Ա Ն Պ Լ Ա Ն

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ 2016-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

I. ԱՐԱՐԱՏՅԱՆ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Արարատյան ջրավազանային կառավարման տարածքը (այսուհետ՝ Արարատյան ՋՏԿ) ընդգրկում է Արփայի (2306 կմ<sup>2</sup> Ջահուկ և հարակից այլ փոքր գետակների ավազանների հետ միասին), Վեղիի (1129 կմ<sup>2</sup> Արածոյի գետավազանի հետ միասին) և Ազատի (954 կմ<sup>2</sup>, որի մեջ մտնում է Ազատի գետավազանը՝ 572 կմ<sup>2</sup> և Ազատ ու Վեղի գետավազանների միջև ընկած տարածքը՝ 382 կմ<sup>2</sup>) գետավազանները և կազմում է ընդամենը 4389 կմ<sup>2</sup>: Արարատյան ՋՏԿ-ն վարչատարածքային տեսակետից ընդգրկում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատի և Արարատի տարածաշրջանները, Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գառնի, Գեղարդ, Գողթ համայնքների տարածքները:

2. Արարատյան ջրավազանային կառավարման պլանի հիմնական նպատակը հավասարակշռելն է ջրօգտագործողների՝ ներառյալ գյուղատնտեսության, ձկնաբուծության, արդյունաբերության, էներգետիկայի և շրջակա միջավայրի փոխկապակցված հարաբերու-

թյունները, ինչպես նաև աջակցել ջրային ռեսուրսների կառավարման համար պատասխանատու մարմիններին, վարչական մարմիններին և հանրությանը՝ ջրային ռեսուրսների ոլորտում որոշումների կայացմանը, և վերջին հաշվով դրանց ռացիոնալ և արդյունավետ օգտագործմանը:

## II. ԱՐԱՐԱՏՅԱՆ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

3. Արարատյան ՋՏԿ-ի գետերի բնական հոսքն Ազատ, Վեղի և Արփա գետավազաններում կազմում է 1177.0 մլն մ<sup>3</sup>, այդ թվում՝ էկոլոգիական թողքը՝ 133.5 մլն մ<sup>3</sup>:

4. Արարատյան ՋՏԿ-ի Ազատ, Վեղի և Արփա գետավազաններում հաստատված՝ ստորերկրյա ջրային ռեսուրսների շահագործական պաշարները A+B կարգով կազմում են 7.882 մ<sup>3</sup>/վրկ և C<sub>1</sub> 6.69 մ<sup>3</sup>/վրկ: Խորքային հոսքը կազմում է 3.99 մ<sup>3</sup>/վրկ:

5. Արարատյան ջրավազանային կառավարման տարածքի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները որոշվում են «Ջրի ազգային ծրագրի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն՝ իրենց բազմամյա միջին արժեքներով:

6. Արարատյան ՋՏԿ-ի օգտագործելի ջրային ռեսուրսները, ռազմավարական և ազգային ջրային պաշարները սահմանված են սույն հավելվածի N 1 աղյուսակում:

Աղյուսակ N 1

NN ը/կ	Գետավազանի ջրային ռեսուրսները	Գետավազաններ			Ընդամենը մլն.մ <sup>3</sup> /տարի
		Ազատ	Վեղի	Արփա	
1.	Օգտագործելի ջրային ռեսուրսները՝ գետային հոսք	265,2	98,5	679,8	1043,5
	A+B կարգերով հաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները, այդ թվում՝ աղբյուրների միջին տարեկան հոսքը	137.1	68.7	42,8	248,6
	Ընդամենը	402,3	167.2	722.6	1292.1
2.	Ռազմավարական ջրային պաշարը՝				
	Բնական լճերի ծավալի 30%-ը	-	-	-	-
	Ջրամբարների մեռյալ ծավալի 2/3 մասը	6.1	-	16.74	22,84
	C1 կարգով հաստատված ստորերկրյա ջրերի շահագործական պաշարները	73.8	111.9	25.2	210.9

	Ընդամենը	79.9	111.9	41.94	233.74
3.	Ազգային ջրային պաշարը՝				
	Բնական լճերի ծավալի 1/3 մասը	-	-	-	-
	Ջրամբարների մեռյալ ծավալի 1/3 մասը	3.1	-	8.37	11,47
	Ձնաբեր և ֆիռնային դաշտեր				
	Ստորերկրյա ջրերի խորքային հոսքը	6.0	36.0	84,0	126
	Ընդամենը	9.1	36.0	92.37	137.47

III. ԱՐԱՐԱՏՅԱՆ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՍՑԵՆԱՐՆԵՐՆ ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ

7. Արարատյան ՋԿՏ-ում ջրային ռեսուրսների բարելավումն ըստ ոլորտների տալու նպատակով կանխատեսվել է գետավազաններում ջրառաջարկն ու տնտեսական զարգացմամբ պայմանավորված ջրապահանջարկը՝ տնտեսական զարգացմամբ պայմանավորված ջրապահանջարկը կառավարման պլանավորման առաջին վեցամյա ժամանակահատվածի համար՝

1) կանխատեսվող ջրառաջարկը գնահատվում է հաշվի առնելով գետավազաններում տնտեսական զարգացման միտումները և կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա: Ջրապահանջարկի՝ տնտեսական զարգացման վրա հիմնված կանխատեսումները կատարվում են կիրառելով տարբեր մոտեցումներ տարբեր ջրօգտագործման ոլորտների համար՝ պայմանավորված ոլորտների տնտեսական զարգացման առանձնահատկություններով.

2) ջրօգտագործման կանխատեսումները կատարվում են երկու սցենարով՝

ա. բազիսային սցենար՝ ոլորտների աճի տեմպերի կանխատեսումները հիմնականում հիմնված են տնտեսական քաղաքականությամբ սահմանված նպատակային ցուցանիշների վրա,

բ. լավատեսական սցենար՝ բազիսային սցենարին լրացուցիչ խելամիտ աճի տեմպ է ավելացվում, հաշվի առնելով ոլորտի առանձնահատկությունները (տնտեսական աճի լավատեսական սցենարի դեպքում ջրօգտագործման պահանջարկը ավելանում է).

3) Արարատյան ԶԿՏ-ում կանխատեսված ջրառաջարկի և ջրապահանջարկի համադրությամբ գնահատվում են 2014-2015 թվականները և մինչև 2021 թվականի ժամանակահատվածի համար՝ Արարատյան ԶԿՏ-ի գետավազաններում ջրային ռեսուրսների դեֆիցիտը կամ պրոֆիցիտը:

8. Ջրառաջարկի առկա իրավիճակի վերլուծությունն ու սցենարներն են՝

1) Արարատյան ԶԿՏ-ի ջրառաջարկը գնահատվում է՝ հաշվի առնելով գետավազանի տնտեսական զարգացման միտումները և կլիմայի փոփոխության ազդեցությունը ջրային ռեսուրսների վրա: Ջրառաջարկը գնահատվում է հաշվի առնելով Արարատյան ԶԿՏ-ի գետավազանների ազգային, ռազմավարական և օգտագործելի ջրային ռեսուրսների մեծությունները՝ համաձայն սույն հավելվածի N 1 աղյուսակի.

2) Արարատյան ԶԿՏ-ի գետավազաններում ջրառաջարկի կանխատեսվող փոփոխությունը 2016-2021 թվականների և հեռանկարային 2040 թվականի համար ներկայացված է համաձայն սույն հավելվածի N 2 աղյուսակի.

Աղյուսակ N 2

Գետավազանը	Ջրառաջարկի տիպը	Ջրառաջարկը, մլն մ <sup>3</sup>								
		2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2040
Ազատ	Գետային հոսք	265,2	265,5	265,7	266,0	266,2	266,5	266,7	267,0	271,8
	Ստորերկրյա հոսք	137,1	137,2	137,4	137,5	137,6	137,8	137,9	138,0	140,5
	<b>Ընդամենը</b>	402,3	402,7	403,1	403,5	403,8	404,2	404,6	405,0	412,4
Վեղի	Գետային հոսք	98,5	98,6	98,7	98,8	98,9	99,0	99,1	99,2	101,0
	Ստորերկրյա հոսք	68,7	68,8	68,8	68,9	69,0	69,0	69,1	69,2	70,4
	<b>Ընդամենը</b>	167,2	167,4	167,5	167,7	167,8	168,0	168,2	168,3	171,4
Արփա	Գետային հոսք	679,8	675,4	670,9	666,5	662,0	657,6	653,1	648,7	564,2
	Ստորերկրյա հոսք	42,8	42,5	42,2	42,0	41,7	41,4	41,1	40,8	35,5
	<b>Ընդամենը</b>	722,6	717,9	713,2	708,4	703,7	699,0	694,3	689,5	599,8
<b>Ընդամենը Արարատյան ԶԿՏ-ում</b>		<i>1292,1</i>	<i>1287,9</i>	<i>1283,7</i>	<i>1279,6</i>	<i>1275,4</i>	<i>1271,2</i>	<i>1267,0</i>	<i>1262,9</i>	<i>1183,5</i>

3) N 2 աղյուսակի համաձայն մինչև 2021 թվականն Արարատյան ՋԿՏ-ի ջրառաջարկը կանխատեսվող կլիմայի փոփոխության պայմաններում կնվազի մոտ 2,3%-ով կամ 29,2 մլն մ<sup>3</sup>-ով, մինչև 2040 թվականը՝ 8,4%-ով կամ 108,6 մլն մ<sup>3</sup>-ով.

4) ջրառաջարկի ձևավորման հիմնական խնդիրներից է գետավազաններում ազատ ջրահոսքի կուտակումը: Կուտակված ջուրը կարող է հնարավորինս հավասարաչափ բաշխվել տարվա բոլոր ամիսներին՝ ջրապահանջարկի բավարարման համար: Կլիմայի փոփոխության հետևանքով Արարատյան ՋԿՏ-ում ջրային ռեսուրսների սպասվող նվազումը և ջրի հեռանկարային պահանջարկի աճը կարելի է լուծել ջրավազանում նոր ջրամբարներ կառուցելու միջոցով.

5) Ջրի ազգային ծրագրի հայեցակարգով Արարատյան ՋԿՏ-ում նախատեսված է կառուցել 2 ջրամբար՝ մոտ 23.1 մլն մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով: Նախնական ուսումնասիրվել են 9 ջրամբարների թասեր՝ մոտ 185,6մլն մ<sup>3</sup> ընդհանուր ծավալով, ինչպես նաև նախնական գնահատվել են, բայց դեռ ուսումնասիրված չեն 15 ջրամբարներ 62.1 մլն մ<sup>3</sup> ծավալով: Նախատեսվող ջրամբարների կառուցմամբ կստեղծվեն լրացուցիչ հզորություններ՝ շուրջ 270.8 մլնմ<sup>3</sup> ջուր ամբարելու համար, ինչն իր հերթին հնարավորություն կտա ավելացնել ջրային հոսքի կարգավորման հնարավորությունները:

9. Ըստ ոլորտների ջրապահանջարկի և ջրառաջարկի բարելավման սցենարներն են՝

1) Արարատյան ՋԿՏ-ի ջրառաջարկի և ջրապահանջարկի վերլուծությունը տրվում է բազիսային և լավատեսական սցենարներով՝ ըստ ջրօգտագործման ոլորտների: Սցենարները որոշվել են Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի և Արարատի մարզերի 2014-2018 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերից: Արարատյան ՋԿՏ-ում ջրառաջարկի և ջրապահանջարկի միտումները մինչև 2021 թվականը, ըստ ջրօգտագործման ոլորտների բազիսային և լավատեսական սցենարների, ներկայացված են համաձայն սույն հավելվածի NN 3 և 4 աղյուսակների.

## Աղյուսակ N 3

Գետա- վազանը	Ջրօգտագործումն ըստ ոլորտների	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Ազատ	Խամելու-կենցաղային	8.04	8.16	8.27	8.39	8.5	8.62	8.73	8.85
	Ռոռզում	108.6	112.4	116.2	120	123.8	127.6	131.4	135.2
	Ձկնաբուծություն	0.9	0.9	0.9	0.9	0.9	0.9	0.9	0.68
	Արդյունաբերություն	0.15	0.16	0.18	0.19	0.2	0.22	0.23	0.24
	Ջրարբիացում	0.65	0.67	0.7	0.72	0.74	0.76	0.79	0.81
	Հիդրոէներգետիկա	79.0	79.0	79.0	79.0	79.0	79.0	79.0	79.0
	<b>Ընդամենը ջրապահանջարկը</b>	<b>197.34</b>	<b>201.29</b>	<b>205.25</b>	<b>209.20</b>	<b>213.14</b>	<b>217.10</b>	<b>221.05</b>	<b>224.78</b>
	<b>Ջրատաշարկը</b>	<b>402.30</b>	<b>402.70</b>	<b>403.10</b>	<b>403.50</b>	<b>403.80</b>	<b>404.20</b>	<b>404.60</b>	<b>405.00</b>
	<b>Դեֆիցիտը/պրոֆիցիտը</b>	<b>204.96</b>	<b>201.41</b>	<b>197.85</b>	<b>194.30</b>	<b>190.66</b>	<b>187.10</b>	<b>183.55</b>	<b>180.22</b>
Վերի	Խամելու-կենցաղային	14.48	14.68	14.89	15.1	15.3	15.51	15.72	15.92
	Ռոռզում	108.7	111.3	113.8	116.4	119	121.5	124.1	126.7
	Ձկնաբուծություն	15.72	15.16	14.6	14.04	13.47	12.91	12.35	11.79
	Արդյունաբերություն	3.18	3.47	3.75	4.03	4.31	4.59	4.88	5.16
	Ջրարբիացում	0.75	0.78	0.8	0.83	0.85	0.88	0.91	0.93
	Հիդրոէներգետիկա	0	0	0	0	0	0	0	0
	<b>Ընդամենը ջրապահանջարկը</b>	<b>142.83</b>	<b>145.39</b>	<b>147.84</b>	<b>150.40</b>	<b>152.93</b>	<b>155.39</b>	<b>157.96</b>	<b>160.50</b>
	<b>Ջրատաշարկը</b>	<b>167.20</b>	<b>167.40</b>	<b>167.50</b>	<b>167.70</b>	<b>167.80</b>	<b>168.00</b>	<b>168.20</b>	<b>168.30</b>
	<b>Դեֆիցիտը/պրոֆիցիտը</b>	<b>24.37</b>	<b>22.01</b>	<b>19.66</b>	<b>17.30</b>	<b>14.87</b>	<b>12.61</b>	<b>10.24</b>	<b>7.80</b>
Արվա	Խամելու-կենցաղային	14.76	14.97	15.18	15.39	15.6	15.81	16.02	16.23
	Ռոռզում	73.18	75.12	77.07	79.01	80.96	82.9	84.84	86.79
	Ձկնաբուծություն	11.62	14.94	18.26	21.58	24.9	28.22	31.54	34.86
	Արդյունաբերություն	0.06	0.06	0.07	0.07	0.08	0.08	0.09	0.09
	Ջրարբիացում	0.64	0.66	0.68	0.71	0.73	0.75	0.77	0.79
	Հիդրոէներգետիկա	620.0	608.0	568.0	548.0	536.0	536.0	536.0	536.0
	<b>Ընդամենը ջրապահանջարկը</b>	<b>720.26</b>	<b>713.75</b>	<b>679.26</b>	<b>664.76</b>	<b>658.27</b>	<b>663.76</b>	<b>669.26</b>	<b>674.76</b>
	<b>Ջրատաշարկը</b>	<b>722.60</b>	<b>717.90</b>	<b>713.20</b>	<b>708.40</b>	<b>703.70</b>	<b>699.00</b>	<b>694.30</b>	<b>689.50</b>
	<b>Դեֆիցիտը/պրոֆիցիտը</b>	<b>2.34</b>	<b>4.15</b>	<b>33.94</b>	<b>43.64</b>	<b>45.43</b>	<b>35.24</b>	<b>25.04</b>	<b>14.74</b>
Արարատյան ՋԿԿ	Խամելու-կենցաղային	37.28	37.81	38.34	38.88	39.40	39.94	40.47	41.00
	Ռոռզում	290.5	298.8	307.1	315.4	323.8	332.0	340.34	348.7
	Ձկնաբուծություն	28.24	31.0	33.76	36.52	39.27	42.03	44.79	47.33
	Արդյունաբերություն	3.39	3.69	4.00	4.29	4.59	4.89	5.20	5.49
	Ջրարբիացում	2.04	2.11	2.18	2.26	2.32	2.39	2.47	2.53
	Հիդրոէներգետիկա	699	687	647	627	615	615	615	615
	<b>Ընդամենը ջրապահանջարկը</b>	<b>1060.4</b>	<b>1060.4</b>	<b>1032.4</b>	<b>1024.4</b>	<b>1024.3</b>	<b>1036.3</b>	<b>1048.3</b>	<b>1060.0</b>
	<b>Ջրատաշարկը</b>	<b>1292.1</b>	<b>1288.0</b>	<b>1283.8</b>	<b>1279.6</b>	<b>1275.3</b>	<b>1271.2</b>	<b>1267.1</b>	<b>1262.8</b>
	<b>Դեֆիցիտը/պրոֆիցիտը</b>	<b>231.7</b>	<b>227.6</b>	<b>251.5</b>	<b>255.2</b>	<b>251.0</b>	<b>235.0</b>	<b>218.8</b>	<b>202.8</b>

2) Արարատյան ՋԿԿ-ում խամելու կենցաղային նպատակով ջրառի կանխատեսման համար հինք են հանդիսանում ջրավազանի բնակչության աճի միտումները: Արարատյան ՋԿԿ-ում 2015 թվականի հունվարի դրությամբ խամելու կենցաղային նպատակով ջրառը

կազմել է 37,3 մլն մ<sup>3</sup>: Ըստ ելակետային սցենարի՝ 2021 թվականին Արարատյան ԶԿՏ-ում խմելու կենցաղային նպատակով ջրառը կաճի մոտ 10%-ով և կկազմի 41 մլն մ<sup>3</sup>, Արարատյան ԶԿՏ-ում խմելու կենցաղային նպատակով ջրառի քիչ տոկոսով աճը պայմանավորված է բնակչության ցածր աճի միտումներով:

3) 2015 թվականի հունվարի դրությամբ Արարատյան ԶԿՏ-ում ոռոգման նպատակով տարեկան ջրառը կազմել է 290,5 մլն մ<sup>3</sup>: Ոռոգելի հողատարածքների տարեկան 3,5% աճի դեպքում՝ ըստ ելակետային սցենարի, 2021 թվականին Արարատյան ԶԿՏ-ի ոռոգման նպատակով ջրառը կկազմի 348,7 մլն մ<sup>3</sup>:

4) ջրարբիացման համար ընդունվում է նույն՝ տարեկան 3,5% աճը .

5) Արարատյան ԶԿՏ-ում ձկնաբուծության զարգացումը սցենարներով մինչև 2021 թվականը՝ 2014 թվականի համեմատ, ակնկալվում է. Արվիայի գետավազանում ջրօգտագործումը կաճի մոտ 3 անգամ՝ 11,62 մլն մ<sup>3</sup>-ից հասնելով 34,86 մլն մ<sup>3</sup>: Ազատի և Վեդիի գետավազաններում կնվազի մինչև 25%՝ 16,62 մլն մ<sup>3</sup>-ից հասնելով 12,47 մլն մ<sup>3</sup>: Ազատի և Վեդիի գետավազաններում ձկնաբուծության նպատակով ջրօգտագործման նվազումը կապված է Արարատյան դաշտի, ինչպես ստորերկրյա ջրերի մակարդակների նվազման հետ, այնպես էլ ջուր խնայող նոր տեխնոլոգիաների ներդրման պլանավորմամբ:

6) 2015 թվականի հունվարի դրությամբ Արարատյան ԶԿՏ-ում արդյունաբերության նպատակով ջրառը կազմել է 3,4 մլն մ<sup>3</sup>: Ըստ ելակետային սցենարի՝ 2021 թվականին արդյունաբերական նպատակով ջրառը կաճի մոտ 62%-ով և կկազմի 5,5 մլն մ<sup>3</sup> .

7) 2015 թվականի հունվարի դրությամբ Ազատի գետավազանում հիդրոէներգետիկ նպատակով ջրառը կազմել է 79 մլն մ<sup>3</sup>, Արվիայի գետավազանում՝ 620 մլն մ<sup>3</sup>: Հիդրոէներգետիկայի ջրապահանջարկը դիտարկելիս հաշվարկների վրա կրկնակի, եռակի և ավելի անգամ ջրօգտագործման գործոնը հնարավորինս նվազեցնելու համար միննույն ջրային ռեսուրսից կատարված մի քանի հիդրոէներգետիկ նպատակով ջրառներից ընտրվել է

առավելագույն ջրաքանակ ունեցողը: Հաշվարկներում որպես Եղեգիս վտակից կատարվող հիդրոէներգետիկ նպատակով ջրառ ընդունվել է 126.1 մլն մ<sup>3</sup> արժեքը, քանի որ դրա մեջ է մտնում նաև մնացած ՓՀԷԿ-երի շահագործման համար օգտագործված և ջրային ռեսուրս վերադարձված ջրաքանակը: Ընդունվել է, որ Ազատի գետավազանում հիդրոէներգետիկ նպատակով ջրառը մինչև 2021 թվականը չի փոփոխվելու: Ըստ Արփայի գետավազանի համար ընդունված սցենարի՝ հիդրոէներգետիկայի ջրապահանջարկը մինչև 2017 թվականը կնվազի՝ հասնելով 536 մլն մ<sup>3</sup>-ի, այնուհետև կմնա անփոփոխ: 2017 թվականին հիդրոէներգետիկայի ջրապահանջարկի պակասեցումը կապված է Արփա-Սևան թունելի շահագործման հետ, որի դեպքում կդադարեցվի Կեչուտի ջրամբարից «Կեչուտի» ՓՀԷԿ-ին ջրի մատակարարումը: Բացի դրանից՝ ջրապահանջարկի նվազումը պայմանավորված է լինելու հիդրոէներգետիկայի ոլորտում ջրախնայող համակարգերի ներդրմամբ: Վեղիի գետավազանում ներկայումս հիդրոէներգետիկ նպատակով ջրառ չի իրականացվում, չնայած առկա որոշակի պոտենցիալին: Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից տրված չեն նաև ջրօգտագործման թույլտվություններ՝ փոքր հիդրոէլեկտրակայաններ կառուցելու համար: Այդ պատճառով Վեղիի գետավազանում հիդրոէներգետիկայի ջրապահանջարկը հավասար է զրոյի և մինչև 2021 թվականն աճի միտումներ չունի:

Աղյուսակ N 4

Գետավազան	Ջրօգտագործումն ըստ ոլորտների	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021
Ազատ	Ջրապահանջարկը	197.34	209.7	218.5	227.7	237.5	247.5	258	269
	Ջրառաջարկը	402.3	402.7	403.1	403.5	403.8	404.2	404.6	405
	Դեֆիցիտը/պրոֆիցիտը	204.96	193	184.6	175.8	166.3	156.7	146.6	136
Վեղի	Ջրապահանջարկը	142.8	147.11	151.43	155.74	160.06	164.37	168.69	173
	Ջրառաջարկը	167.2	167.4	167.5	167.7	167.8	168	168.2	168.3
	Դեֆիցիտը/պրոֆիցիտը	24.4	20.29	16.07	11.96	7.74	3.63	-0.49	-4.7
Արփա	Ջրապահանջարկը	720.3	717.2	686.6	676.5	686.8	697.7	709.1	720.9
	Ջրառաջարկը	722.6	717.9	713.2	708.4	703.7	699	694.3	689.5
	Դեֆիցիտը/պրոֆիցիտը	2.3	0.7	26.6	31.9	16.9	1.3	-14.8	-31.4
Արարատյան ՋԿՏ	Ջրապահանջարկը	1060.4	1074.0	1056.5	1059.9	1084.4	1109.6	1135.8	1162.9
	Ջրառաջարկը	1292.1	1288	1283.8	1279.6	1275.3	1271.2	1267.1	1262.8
	Դեֆիցիտը/պրոֆիցիտը	231.7	214.0	227.3	219.7	190.9	161.6	131.3	99.9



10. Արարատյան ԶԿՏ-ում մինչև 2021 թվականը ջրատաջարկը և ջրապահանջարկը մնում են նույնը՝ 1060,4 մլն մ<sup>3</sup>, իսկ պրոֆիցիտը (ջրատաջարկի և ջրապահանջարկի տարբերությունը) կնվազի մոտ 12,5%՝ 231,7 մլն մ<sup>3</sup>-ից հասնելով 202,8 մլն մ<sup>3</sup>: Լավատեսական սցենարով ջրապահանջարկը կաճի մոտ 9,7%-ով՝ 1060,4 մլն մ<sup>3</sup>-ից հասնելով մինչև 1262,8 մլն մ<sup>3</sup>, իսկ պրոֆիցիտը կնվազի մոտ 56,9%-ով՝ մինչև 99,9 մլն մ<sup>3</sup>:

11. Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում ընդհանուր առմամբ բավարարելի է տնտեսական զարգացմամբ պայմանավորված ջրօգտագործման պահանջարկը և հնարավոր է մեղմել ազդեցությունները ջրատաջարկի վրա ինչպես երկարաժամկետային, այնպես էլ լավատեսական սցենարով տնտեսության զարգացման պայմաններում: Սակայն առանձնահատուկ ուշադրություն է պետք դարձնել Վեդիի գետավազանին, որտեղ տնտեսական զարգացման բազիսային սցենարի դեպքում 2021 թվականից հետո, իսկ լավատեսական սցենարի դեպքում 2019 թվականից հետո կխախտվի էկոլոգիական հավասարակշռությունը:

12. Արարատյան ջրավազանային տարածքում արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները (2016-2018 թթ.) սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի N 338 -Ն որոշման N 2 հավելվածով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
մարտի 31-ի N 338 - Ն որոշման

ԱՐԱՐԱՏՅԱՆ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՄԱՆՆ  
ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

NN ը/կ	Միջոցառման անվանումը	Կատարողը	Կատարման ժամկետը
1	2	3	4
1.	ՓՀԼԿ-երի ՋԹ-ներով սահմանված ջրօգտագործման պայմանների վերանայում՝ ներառյալ ջրառի ծավալը և ռեժիմը, համապատասխանեցում բնապահպանական պահանջներին	ՀՀ բնապահպանության նախարարություն	2016 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ
2.	Ջրօգտագործման թույլտվությունների պայմանների իրականացման հսկողության և վերահսկողության մեխանիզմների հզորացում՝ ներառյալ ջրասակավ սեզոններին ջրօգտագործողների միջև ջրի բաշխման մեխանիզմների սահմանում և ջրօգտագործման օպտիմալացումը	ՀՀ բնապահպանության նախարարություն	2016 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ
3.	«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի պահանջների համաձայն «Ջերմուկի հիդրոլոգիական արգելավայր» պետական արգելավայրի պահպանության ռեժիմի ապահովում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2016 թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ
4.	Ինքնամոնիթորինգի իրականացման մեխանիզմների մշակում, ընդունում և կիրարկում՝ ջրօգտագործողների հաշվետվողականության բարելավման և ջրօգտագործման, ջրահեռացման և ջրային ռեսուրսների աղտոտման փաստացի տվյալների համալրման նպատակով	ՀՀ բնապահպանության նախարարություն	2016 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ
5.	Կլիմայի փոփոխության հարմարվողականության ներառում համայնքային և մարզային զարգացման ծրագրերում և պլաններում	ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն  ՀՀ բնապահպանության նախարարություն	2016 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ
6.	Ջրախնայող տեխնոլոգիաների ներդրման հայեցակարգի մշակում և ընդունում	ՀՀ բնապահպանության նախարարություն  ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2017 թ. նոյեմբերի 3-րդ տասնօրյակ

1	2	3	4
7.	ՓՀԷԿ-երի կառուցման և շահագործման համար արգելված գոտիների՝ հատուկ պահպանվող տարածքներ, անտառային տարածքներ, սողանքային գոտիներ, ջրաբանական խոցելի տարածքներ, սահմանում	ՀՀ բնապահպանության նախարարություն	2017 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ
8.	Հոսակորուստները կրճատելու նպատակով իրավական, տնտեսական և վարչական խթանիչների մշակում և ներդրում	ՀՀ բնապահպանության նախարարություն  ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2017 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ
9.	Գետի ինքնամաքման կարողության գնահատման մեթոդի և վերջինիս կիրարկման մեխանիզմների մշակում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն  ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն  ՀՀ բնապահպանության նախարարություն	2018 թ. հոկտեմբերի 3-րդ տասնօրյակ
10.	Ռեկրեացիոն գոտիներում ջրային ռեսուրսների պահպանության պահանջների սահմանում	ՀՀ բնապահպանության նախարարություն  ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	2018 թ. հոկտեմբերի 2-րդ տասնօրյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ